

ԵՎՐՈՊԱՑԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ
(XVI—XVIII ԴԴ.)

Աղբյուրագիտական ակնարկ

Պատմ. գիտ. դոկտոր Մ. Կ. ԶՈՒՆԱՅԱՆ

Իսպանիան դեռևս Ֆիլիպ II թագավորի ժամանակ՝ XVI դարի 80-ական թթ., բանակցություններ էր վարում շահ Մուհամմեդ Խուդաբանդայի հետ մի կողմից առևտրի բնագավառում առանձնաշնորհումներ ստանալու, մյուս կողմից՝ Թուրքիայի դեմ միացյալ ճակատ կազմելու նպատակով։ Սակայն դիվանագիտական այդ փորձերը հաջողություն չէին ունեցել։ Ֆիլիպ II-ը, ընթանալով իր հոր ծրագրած ուղիով, Իրանի հետ նոր դիվանագիտական շփման մեջ մտավ 1601 թ.՝ այդ երկիր ուղարկելով ևս մի պատվիրակություն՝ բաղկացած Հնդկաստանի իր ներկայացուցիչներից։ Այդ պատվիրակության մեջ էր նաև ավգուստինյան հոգևորական Անտոնիո դե Գուվեան, որը և դարձավ Շահ-Աբասի կյանքին ու քաղաքական գործունեությանը նվիրված մեծարժեք ու հավաստի գրքի հեղինակը¹։ Իսպանական պատվիրակությունը 1602 թ. փետրվարի 15-ին դուրս է դալիս Գոնյից և սեպտեմբերի 4-ին հասնում է իրանական Մեշեդ քաղաքը՝ Շահ-Աբասի այն ժամանակվա նստավայրը։ Իսպանական պատվիրակությունը ընդունելության ժամանակ հավաստիացնում է շահին, որ Հնդկաստանի փոխարքան որևէ մտադրություն չունի ուղմական արշավանք կազմակերպելու Պարսից ծոցում։ Այսպիսով իր թիկունքից, ինչպես այդ մասին գրում է Անտոնիո դե Գուվեան, Շահ-Աբասը պատերազմ է հայտարարում Թուրքիային։

Անտոնիո դե Գուվեայի աշխատությունն ընդգրկում է Շահ-Աբասի կողմից Թուրքիայի դեմ ձեռնարկած պատերազմի սկզբից, այսինքն 1602 թ. աշնանից, ընդհուպ մինչև 1608 թ. ընկած ժամանակաշրջանը։ Հաղորդված նյութերի առատությամբ ու խորությամբ, արված նուրբ դիտողություններով Անտոնիո դե Գուվեայի այս գիրքը հայ ժողովրդի պատմության ուսումնասիրության համար բացառիկ արժեք ունի։ Բերված վկայությունները հավաստի են և ղեկը իրանական ու թուրքական աղբյուրների միակողմանի միտումնավորությունից։ Աշխատության մեջ հեղինակը մեծ համակրանքով ու ցավով է գրում թուրք-իրանական պատերազմների ընթացքում հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների մասին։ Երկասիրության երրորդ գիրքը, որ վերնագրված է «Հայերի ստրկացման ու նրանց բռնազաղթի մասին», սրտաճմլիկ տողերով մանրամասն նկարագրվում է հայերի բռնազաղթի դժգույն պատկերը²։

Անտոնիո դե Գուվեայից հետո Իսպանիան 1618 թ. ևս ո՛ր անգամ վերջ կատարեց Իրանի հետ անմիջական դիվանագիտական և առևտրական հարաբերություններ հաստատելու։ Այդ նրպատակով Իրան ուղարկվեց Մազրիդի պալատի նոր պատվիրակությունը, որին ղեկավարում էր Գարսիա դե Սիլվա Ֆիգուերան, որը և թողեց պատմական որոշակի արժեք ներկայացնող իր ուղեգրությունը³։ Ծիշտ է, Գարսիա դե Սիլվան բուն Հայաստանում չի եղել, այլ հասել է մինչև

¹ Այդ աշխատությունը առաջին անգամ լույս է տեսնում լիսաբոնում 1611 թ., հետևյալ վերնագրով՝ «Relaçam en quoe tratam as guerras et grandes victorias que alcançon o Grande Rey de Persia xa Abbas do Graa Turco Mahometto et seu filho Amethe». Նույնով այդ աշխատությունը թարգմանվում ու հրատարակվում է հին ֆրանսերենով, որը և մենք օգտագործել ենք. տե՛ս Relation des grandes guerres et victoires obtenues par le roy de Perse Chah Abbas contre les empereurs de Turquie Mahomet et Achmet son fils. Par le P. Fr. Anthoine de Gouvea, traduit de l'original portuguais. Rouen, 1646.

² Anthoine de Gouvea. Op. cit., p. 341—385.

³ Մենք օգտագործել ենք Գարսիա դե Սիլվայի աշխատության ֆրանսերեն թարգմանությունը. տե՛ս L'ambassade de D. Garcias de Silva Figueroa en Perse, contenant la politique de ce grand empire, les moeurs du roy Schah Abbas et une relation exacte de tous les lieux de Perse et des Indes, ou cet ambassadeur a esté l'espace de huit années qu'il y a demeuré. Traduite de l'Espagnol par monsieur de Wicqueford, Paris, 1667.

Թալիբի, սակայն նոր Զուլալյի հայերի մասին խոսելիս նա անդրադառնում է նաև ոչ հեռավոր անցյալում հայերի բռնազաղթի հետ կապված որոշ հարցերի, Եվրոպայի հետ հայ, մասնավորապես նոր Զուլալյի խոչալության ունեցած առևտրական հարաբերություններին և այլն:

XVII դարի 20-ական թթ. Շահ-Աբասը Անգլիայի հետ դաշնակցած գրավեց Հորմուզը և վերջ ալեք Պարսից ծոցում պորտուգալացիների գերիշխանությանը: Անգլիացիների այս օգնությունը Իրանին մեծապես ուժեղացրեց անգլիական արևելահնդկական առևտրական ընկերության ազդեցությունը երկրում: Նման պայմաններում Ֆրանսիան, հանձինս կարդինալ Ռիշելիեի, արեց առավելագույնը Իրանի հետ իր տնտեսական ու քաղաքական հարաբերությունները բարելավելու նպատակով: 1626 թ. Իրան ուղարկվեց Ֆրանսիական հատուկ պատվիրակություն ղեկավարելու հայ գլխավորությամբ: Սակայն թուրքական կառավարության պահանջով ղեկավար Մարգարեան և իր օգնականները վերադառնալով Ֆրանսիա: Իրանի հետ դիվանագիտական բանակցություններ վարելու պաշտոնը ղրվեց հայր Պատրիկի վրա: Նորջուղացի խոջա Նադարի միջնորդությամբ հայր Պատրիկը Վազվինում բնակվում է Շահ-Աբասի կողմից: Ֆրանսիական պատվիրակությանը հաջողվում է դիվանագիտական և կրոնական կենտրոններ հիմնել Սպահանում և Բաղդատում՝ ուղղված, անշուշտ, անգլիական ազդեցության դեմ: Հայր Պատրիկը թողել է Իրան կատարած իր այցելության հանգամանակից շարադրանքը, որ հազվագեղ խոսք է գեղում նաև լրանահայերի ու Հայաստանի մասին⁴: Հայր Պատրիկի աշխատությունը հետաքրքիր է մի շարք վավերագրերի հրատարակմամբ: Դրանցից է սուլթան Մուրադ IV-ի 1624 թ. ապրիլի ֆերմանը կապույտներին Օսմանյան կայսրության պետական սահմաններում արտոնություններ շնորհելու մասին, Շահ-Աբասի համանման շնորհագիրը նույն կապույտներին՝ Իրանում ազատ գործունեություն ծավալելու մասին և, վերջապես, Շահ-Աբասի նամակը ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս XIII-ին:

Կարդինալ Ռիշելիեի ձեռնարկած գործը հետադալում շատ ավելի մեծ ընդգրկումով շարունակեցին Լյուդովիկոս XIV-ը և նրա հեռատես մինիստր Կոլբերը: Նրանց հիմնական նպատակն էր թուլացնել Անգլիայի և Հոլանդիայի ազդեցությունը Իրանի վրա և Ֆրանսիայի համար Իրանում առևտրի բնագավառում մենաշնորհային իրավունք ապահովել: Այդ առումով Իրան ուղարկվեցին նորանոր պատվիրակություններ, որոնք հայերի մասին թողեցին արմբավոր գրառումներ, սակայն մինչ այդ Հայաստանի և հայերի մասին կան պատմական բնույթի այլ հեղինակների աշխատություններ, որոնք ժամանակագրական կարգով նախորդում են վերը մատնանշված աշխատություններին: Այսպես, իսպանացի Տեխեյրան, որին կարելի է դասել ուղեգրների շարքը, թողել է Իրան կատարած իր այցելության նկարագրությունը⁵: Նա Հայաստանում չի եղել, սակայն Իրանի հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ նրա հաղորդած որոշ վկայությունները անմիջական առնչություն ունեն հայ ժողովրդի պատմության հետ: Բացի այդ, Տեխեյրան կատարել է XV դարի պարսիկ հայտնի պատմագիր Միրխոնդի «Մառուզնե ուսսեֆա» («Մարբուտության ալգի») հայտնի աշխատության բաղվածական խաղվածությունը, որը մասնագետների հավաստիացումով թերություններ ունի⁶: 1605 թ. Տեխեյրան Հորմուզի, Բասրայի ու Բաղդադի վրայով վերադառնում է հայրենիք: Հաջորդ հեղինակը, որի ուղեգրությունը Արևելքի, ներառյալ նաև Հայաստանի, պատմության ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուրներից մեկն է համարվում, Պիետրո դելլա Վալլեն է (1586—1652 թթ.): Ուղեգիրը գեղես էրիտասարդ հասակում աչքի էր ընկել որպես բանաստեղծ ու գրականագետ և ստացել Ֆանտաստիկո մականունը: 1614 թ. նեապոլիտանցի բժիշկ-պրոֆեսոր Մարիո Սկիպանոյի խորհրդով Պիետրո դելլա Վալլեն ձեռնարկում է մի մեծ ճանապարհորդությունը՝ գնալ Արևելք: Նույն թվականին նա ժամանում է Կոստանդնուպոլիս, որ մնում է մի տարի և սովորում թուրքերեն լեզուն: Կոստանդնուպոլսից Պիետրո դելլա Վալլեն ուղևորվում է Կասիոն, ապա Երուսաղեմ, իսկ այնուհետև՝ Դամասկոս, Հալեպ և Բաղդադ: Այստեղ նա ծա-

⁴ Relation du voyage de Perse fait par le R. P. Pacifique. Paris, 1631.

⁵ Relaciones de Pedro Texeira descendencia y succession de los reyes de Persia y de Hormuz y de un viaje hecho por el mismo autor don de la India Oriental hasta Italia por terra. Amberes, 1610. Կոստանդինի կատարում է սույն աշխատության թարգմանությունը ֆրանսերեն, տե՛ս Voyages de Texeira ou l'histoire des rois de Perse, traduite d'Espagnol en françois. Vol. I, II, Paris, 1681.

⁶ Երիտանդի եվրոպական լեզուներով թարգմանությունների մասին տե՛ս А. Е. Крымский. История Персии, ее литературы и дервишской теософии. Т. III, М., 1917.

նոթանում / ասորու⁷ Սիտտի Մաանիի հետ, ամուսնանում է և նրա հետ միասին 1616 թ. մեկնում Իրան։ Ուշգիրը սիրալիր ընդունելության է արժանանում Շահ-Աբասի կողմից Ֆարրահ-Հաթադում և 1619 թ. մասնակցում է շահի՝ Արդեբիլի մոտ թուրքերին տված ճակատամարտին ու մանրամասն նկարագրում այն 1621 թ. Պիետրո գելլա Վալլեն մեկնում է Սպահան, այնուհետև՝ Շիրազ, այցելում է Պերսեպոլիսի ավերակներն ու այդ բոլորը մանրամասն նկարագրում իր աշխատության մեջ։ Իրանում նա մնում է մինչև 1623 թ., այնուհետև ուղևորվում է Հնդկաստան։ Պիետրո գելլա Վալլեն Հայրենիք է վերադառնում Մոսկվայի, Բասրայի, Հալեպի և Կիպրոսի վրայով։ 1626 թ. մարտին Հոռմում նա արժանանում է Ուրբանոս VIII պապի ընդունելությանը, որը նրա առաջարկում է բարձր պաշտոն պատգանհան պալատում։

Պիետրո գելլա Վալլեի ուղեգրությունը, ինչպես նաև Շահ-Աբասի մեծարժանը նվիրված նրա հատուկ աշխատությունը՝ վաղուց ևս գրավել մասնագետների ուշադրությունը՝ ժամանակի միջազգային սուր հարաբերությունների վերաբերյալ այստեղ հաղորդված ստուգապատում ու թարմ նյութերի շնորհիվ։ Ուղեգրի աշխատությունը կաղմված է նամակների ձևով՝ ուղղված իր բարեկամ Մարիո Սկիպանիին։ Շահ-Աբասի պալատում եղած ժամանակ գելլա Վալլեն իրանական տիրակալին խորհուրդ էր տալիս դաշինք կնքել իր պալատը ղեկավարող ղեկավարություն ուղարկած ռուս կողակների հետ՝ ընդգեյմ թուրքերի։ Ուղեգրին թվում էր, թե այդ ճանապարհով իրանցիները կվտարեն թուրքերին Սև ծովից ու կգրավեն Կասանդոնուպոլիսը։ Հայերի, Հայաստանի ու մասնավորապես իրանահայերի մասին Պիետրո գելլա Վալլեի մոտ կան ընդարձակ տեղեկություններ։ Ուղեգրի նամակները, չնայած երբեմն ավելորդ մանրամասնություններին ու ձգձգվածությանը, կարգացվում են հափշտակությամբ։ Պիետրո գելլա Վալլեի աշխատության շնորհիվ մենք հստակ պատկերացում ենք կաղմում XVII դարի 20-ական թթ. Շահ-Աբասի վարած ներքին ու արտաքին քաղաքականության մասին։

1629 թ. Արենելը ուղարկվեց Ֆրանսիական միսիոներներին ևս մի փոքրաթիվ խումբ առաքելական պաշտոնով, որի մեջ էր նաև Հայր Ֆիլիպը։ Նա 1649 թ. Լիոնում լատիներեն լեզվով⁹ հրատարակում է Թուրքիա, Հայաստան և Իրան կատարած իր ուղևորության նկարագրությունը, որը մի քանի տարի անց լույս է տեսնում նաև Ֆրանսերեն թարգմանությամբ¹⁰։

XVII դարի սկզբում եվրոպայի մայրաքաղաքներում սկսում են լույս տեսնել նաև աշխատություններ՝ նվիրված Թուրքիայի պատմությանը, որոնց մեջ արժանահիշատակ է 1609 թ. Լիոնում լույս տեսած Եթալ Էստրինչարի «Օսմանցիների կամ թուրքերի կայսրերի պատմությունը մինչև Մեհմեդ III-ը»¹¹։ Մինչև XVI դարի վերջին քառորդն ընկած ժամանակաշրջանի պատմությունը մի քանի պատմություն է հիվորդայում լույս տեսած համանման աշխատություններից, ըստ որում պատմական անունները, տեղանունները և տերմինները խիստ ազավաղված են։ Հայ

⁷ Sb' u Pietro della Valle. Viaggi in lettere familiare al suo amico Mario Schipanno divisi in tre parti cioe la Turchia, la Persia et l'India. Roma, 1650; Հուսով աշխատությունը լույս է տեսնում նաև ֆրանսերեն էտյեն Կարենոյի և Ֆրանսուա Լե Կոնտի թարգմանությամբ. տե՛ս Pietro della Vallé. Voyages de Pieiro della Vallé, gentilhomme romain dans la Turquie, L'Egypte, la Palestine, la Perse, les Indes Orientales et autres lieux. Vol. I—IV, Paris, 1661—1663.

⁸ Pietro della Vallé. Delle condizioni di Abbas, re di Persia. Venetia, 1628. Sb' u նաև Ժ. Բոդուենի կատարած ֆրանսերեն թարգմանությունը՝ „Histoire apologétique d'Abbas, roy de Perse, traduite de l'italien de messire Pierre de la Valle. Paris, 1631.

⁹ Itinerarium orientale, in quo varii itineraris successus, plures orientis regiones, earum montes, maria et flumina, series principum qui in eis dominati sunt, incolae tam christiani quam infideles, populi, animalia, arbores, plantae et fructus, religiosorum in Oriente missiones ae varii celebres aventus describuntur. Lyon, 1649.

¹⁰ Voyage d'Orient du R. P. Philippe de la Très Sainte Trinité, carme déchausse, où il décrit les divers succez de son voyage, plusieurs régions d'Orient, leurs montagnes, leurs mers et leurs fleuves, la chronologie des princes qui y ont dominé, leurs habitants tant chrestiens qu'infidèles. Lyon, 1652, 1669.

¹¹ Sb' u Histoire des ottomans ou empereurs des Turcs jusque à Mahomet III. Revue et augmentée depuis la première impression... Item un bref de la dernière guerre de Perse, par Jacques Esprinchart. Lyon, 1609.

ժողովրդի պատմության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում գրքի վերջում գետնաշված գլուխը հետևյալ վերնագրով՝ «1577 թ. սկսած պարսկական պատերազմի և այն բոլորի մասին, որ տեղի ունեցան մինչև 1588 թ.», որ մանրամասն խոսվում է Անդրկովկասում թուրք-պարսկական պատերազմների և Իրանի կրած պարտության մասին:

Մեր այս մատենաշատ գրքի լույս ընծայումից մի քանի տարի առաջ նույն Հիոն քաղաքում 1606 թ. հրատարակվում է եվրոպական պետությունների ղեկավարներին հասցեագրված մի ուղերձի լատիներենից կատարված ֆրանսերեն թարգմանությունը¹²: Գրքի առաջին մասում խոսվում է թուրքական վայրագ կարգերի մասին, որոնք քրիստոնյա ժողովուրդներին բերեցին ստրկություն, բառիս լայն իմաստով, Ի դեպ, հենց առաջին մասում էլ նկարագրվում է այսպես կոչված «սևի բաղաճերում» (ստրուկների շուկա) քրիստոնյա գերեվարվածների վաճառքի ցնցող պատկերը: Գրքի երկրորդ մասում շեշտվում է եվրոպայում թուրքերի ունեցած ռազմական հաջողության գլխավոր պատճառը՝ եվրոպական պետությունների անմիաբանությունը:

XVII դարի սկզբի Թուրքիայի, ինչպես նաև Հայաստանի պատմությանը վերաբերող եվրոպական աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում 1605-ից մինչև 1610 թթ. Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպան Բարոն դե Սալինյակի նամակները Կոստանդնուպոլսից հղված ֆրանսիական թագավորին¹³: Նամակներում արծարծվում են Թուրքիայի այդ տարիների քաղաքական պատմության կարևորագույն հարցերը՝ ջալալիների շարժումները, թուրք-իրանական, թուրք-ավստրիական պատերազմները և այլն: Հաղորդված նյութերը միանգամայն բուռն են: Այն աստիճան ծանր էր Օսմանյան կայսրության վիճակը XVII դարի սկզբին, որ բարոն Սալինյակին մի պահ թվում է, թե մոտալուտ է այդ պետության վերջնական կործանումը: Բարոն դե Սալինյակի նամակներին նվիրված ժողովածուում տեղ են գտել նաև Ֆրանսիայի ինքնավարի (1607 թ. մարտի 26-ի), ենիչերիների պետի (նույն թվականի սեպտեմբերի 10-ի)՝ դեսպանին հղված նամակները, որ դարձյալ շոշափվում են ջալալիների շարժումների հետևանքով ծագած հարցերը¹⁴:

XVII դարի 30—40-ական թթ. Թուրքիայի, Իրանի և Հայաստանի պատմության կարևորագույն եվրոպական աղբյուրների շարքին են դասվում գերմանացի արևելագետ Ադամ Օլեարիուսի¹⁵ և ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեի ուղեգրությունները¹⁶: Վերջինս թուրք է պատմական արժեք ներկայացնող ևս մի աշխատություն¹⁷, որը նպաստում է լրացույլ տվյալներ քաղելու Օսմանյան կայսրության կառավարչաձևի, ավատական հարաբերությունների ու բազմաթիվ այլ հարակից հարցերի մասին:

Ադամ Օլեարիուսը (մոտ. 1600—1671) գերմանացի արևելագետ էր, մաթեմատիկոս ու փիլիսոփա: Անտարեկ է կապցիզի համալսարանը: Երիտասարդ հասակում նա ծառայության մեջ է մտնում Հոլշտայնի հերցոգ Ֆրիդրիխ III-ի մոտ: Շուտով նա, որպես դեսպանության քարտուղար, իսկ հետագայում՝ խորհրդատու, մտնում է Ֆիլիպ Կրուլերի և Օտտո Բրուգեմանի՝ Մոսկվա ու Իրան մեկնող դեսպանության կազմի մեջ: Այդ դեսպանության գլխավոր նպատակն էր իրանական բռնությունների վրա լուր և իրավունքներ հասնելու համար առևտրական պայմանագրեր կնքել վերոհիշյալ երկու երկրների հետ: Դեսպանության կազմում Ադամ Օլեարիուսը երկու անգամ եղավ Մոսկովյան պետությունում և 1636—1639 թթ. Անդրկովկասի մերձկասպյան շրջաններում (Շամախի, Դերբենդ և այլն) և Իրանում: Ուղևորության ընթացքում Ադամ Օլեարիուսը սովորում է ռուսերեն, պարսկերեն ու արևելյան այլ լեզուներ և հայրենիք վերադառնալուց հետո մշակում իր հետ բերած հարուստ նյութերն ու հրատարակում իր ուղեգրությունը¹⁸:

¹² *Sté'u Discours parénétique sur les choses turques*. Lyon, 1606.

¹³ *Ambassade en Turquie de Jean Goutand Biron, baron de Salignac* 1605 a 1610: Paris, 1889.

¹⁴ *Նույն տեղում, էջ 124—127*.

¹⁵ *Նույն տեղում, էջ 173—174*.

¹⁶ *Sté'u Les six voyages de Jean Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes*. T. I—IV, Paris, 1692.

¹⁷ *Sté'u J. B. Tavernier. Nouvelle relation de l'intérieur du sérail du Grand Seigneur*. Paris, 1675.

¹⁸ *Relation du voyage d'Adam Olearius en Moscovie, Tartarie et Perse*. Traduit de l'allemand par A. de Wicquefort. Paris, 1679.

Աղամ Օլևարիուսի աշխատության հիմնական մասը նվիրված է Իրանի վիճակի նկարագրությանը. այնտեղ մեծ տեղ է տրված նաև Սեֆյան հարստության քաղաքական պատմության հարցերին՝ սկսած նրա հիմնադիր շահ Իսմայիլից մինչև հեղինակի ժամանակ իրանական զահին բազմած Աբաս II-ի իշխանության առաջին տարիները, ավելի հիշատակվում է մինչև 1643 թ.¹⁹։ Մեզ անհայտ են հեղինակի օգտագործած աղբյուրները. ինչ վերաբերում է XVII դարի 30—40-ական թթ., մասնավորապես շահ Սեֆիի ժամանակաշրջանի պատմության շարադրանքին, ապա դրանք մեծ մասամբ գրված են ականատեսի վկայությամբ։ Շամախիի հայերին ու մասնավորապես չուլա հայերին նվիրված են ընդարձակ էջեր²⁰։

Ժան Լ'ատիստ Տավերնիեն ծնվել է Փարիզում 1605 թ. և իր մահվանցուն կնքել Մոսկվայում 1689 թ.։ Հայրը՝ Գարրիել Տավերնիեն, լինելով փորագորիչ և աշխարհագրական քարտեզներ շրտարարակիչ, իր որդու մեջ վաղ հասակից առաջացնում է սեր դեպի ճանապարհորդությունը. առանձնապես նրա երևակայությունը շոյել է սուսսպեկական Արևելքը։

1636 թ. Ժ. Բ. Տավերնիենի պատեհ առիթ է ներկայանում իրադրոժելու իր երազանքները։ Նա կոստանդնուպոլսի վրայով անցնում է Փոքր Ասիա և Թոյսաթ—էրզրում—Երևան ճանապարհով մտնում է Իրան, 1636-ից մինչև 1663 թ. ընկած ժամանակահատվածում նա Արևելքում ձեռնարկում է վեց ճանապարհորդություն, Իրանում և մասնավորապես Հնդկաստանում նա դրադում է թանկարժեք բյուրեղի առևտրով։ Վեց ճանապարհորդությունների մեջ հայ ժողովրդի պատմության համար առավել հետաքրքրական մասը առաջին գիրքն է։ Ժ. Բ. Տավերնիեն ուղևորությունը գրված է կենդանի ու վառ լեզվով, սակայն հաղորդված անձնանունների ու տեղանունների մի մասը տղավաղված են։ Հեղինակը փաստորեն չի տիրապետել արևելյան լեզուներին որևէ մեկին։ Իրանի մասին եղած հաղորդումների մեծ մասը վերցված են Իրանում երկար տարիներ ապրած հայր Ռաֆայել դյու Մանից և հայր Գարրիել Շինոնից։ Հիբադի, Էրբ մենք համեմատում ենք Ժ. Բ. Տավերնիենի և հայր Ռաֆայել դյու Մանի «Պարսկաստանի վիճակը 1660 թվականին» աշխատությունը, ապա նկատում ենք, որ ուղեգրության ամբողջ հատվածներ պարզ փոխադրություններ են հայր Ռաֆայել դյու Մանի վերոհիշյալ աշխատությունից։ Մեր խոսքը, նախ և առաջ, վերաբերում է նոր Զուղայի հայերի, նրանց կենցաղի ու սովորությունների մասին հաղորդված տեղեկություններին, ինչպես նաև հայկական զավանսներին ու նորոգյալեցիներին շրջանում եվրոպական միսիոներների ծավալած կաթոլիկական քարոզչությունը։

Ինչ վերաբերում է Ժ. Բ. Տավերնիենի մեր մատնանշած մյուս աշխատությանը, այսպեղ. ինչպես խոստովանում է ինքը հեղինակը, վերցված է թուրքական պալատում երկար տարիներ ծառայած երկու եվրոպացիներից։ Իմ դրում, — դրում է նա, — ես ընթերցողներին ներկայացրի թուրքական պալատի հավաստի ու մանրամասն նկարագրությունը՝ հենվելով այն նյութերի վրա, որոնք ... ես նկատեցի կոստանդնուպոլսի կատարած իմ բազմաթիվ ճանապարհորդությունների ընթացքում և այն ամենի վրա, որ ես իմացա երկու իմաստուն մարդկանցից, որոնք բարձր պաշտոններով երկար տարիներ ծառայել էին Սերայում (թուրքական պալատում — Մ. Զ.)²²։ Գրքի առաջաբանում ֆրանսիական թաղավորին հղած իր խոսքում Ժ. Բ. Տավերնիեն ուղում է հավաստիացնել, որ իր գիտությունները սուլթանական պալատի և առհասարակ Թուրքիայի մասին լավագույնն են մինչ այդ եվրոպայում լույս տեսած նույնատիպ աշխատություններին մեջ²³։ Սակայն դա միանգամայն հեռու է իրականությունից։ Ժ. Բ. Տավերնիենից առաջ և նրանից հետո Օսմանյան կայսրության վերաբերյալ լույս տեսան մեծ քանակությամբ տրակտատներ՝ այսպես կոչված «էտաներ» (ֆրանսերեն «états» կազմություն, վիճակ իմաստով), որ ավելի խոր ու ավելի գիտականորեն են լուսաբանվում օսմանյան ռազմավարատարական կարգերի բազմաթիվ կողմերը։ Այսպիսի աշխատությունների թվին, նախ և առաջ պետք է դասել անգլիական թագավոր Կարլոս II-ի ղեսպան Ռիկուի կամ Ռակոտի հուշերը²⁴։ XVII դարի

¹⁹ Նույն տեղում, էջ 612—637։

²⁰ Նույն տեղում, էջ 386—390, 497—500, 581—633 և այլն։

²¹ *St' J. B. Tavernier. Les six voyages...*, I, p. 459—470, 495—518.

²² J. B. Tavernier. Nouvelle relation de l'intérieur du sérail, préface, p. III.

²³ Նույն տեղում։

²⁴ Histoire de l'état présent de l'empire ottoman, contenant les maximes politiques des turcs, les principaux points de la religion mahométane, ses sectes, ses hérésies.

60-ական թթ. Թուրքիայի մասին: Նա 1661 թ. գալիս է Թուրքիա և այնտեղ մնում տասնութ տարի, ըստ որում տասներկու տարի՝ որպես անգլիական հյուպատոս Զմյուռնիայում: Նա բազմաթիվ ճանապարհորդություններ է կատարում Օսմանյան կայսրության տարբեր նահանգներում, սովորում ու հիմնավորապես տիրապետում է թուրքերենին: Ռիկոն այլևայլ ուղիներով ստույգ տեղեկություններ է ստանում Մեհմեդ IV-ի ժամանակաշրջանի թուրքական բանակի, պետական ֆինանսների վիճակի, պալատական կյանքի մանրամասնությունների մասին և այլն, և այդ բոլորը գրի է առնում, ինչպես նշվեց, «Օսմանյան կայսրության արդի վիճակի պատմությունը» վերնագրով աշխատության մեջ, որը Քարգմանված է հվրոպական մի շարք լեզուներով, որը վկայում է աշխատության խիստ արժեքավորության մասին:

Բացի այս երկասիրությունից, Ռիկոն ունի նաև 1623-ից մինչև 1677 թ. ընկած ժամանակաշրջանի օսմանյան դահլիճների պատմությանը նվիրված իսթանբուլում ուսումնասիրություն²⁵: Աշխատության առավել հետաքրքիր մասերը նվիրված են հեղինակի ապրած ժամանակաշրջանի քաղաքական պատմության հարցերի լուսաբանմանը: Ռիկոյի այս աշխատության շատ գրվածքներ անմիջական առնչություն ունեն հայ ժողովրդի պատմության հետ:

Ռիկոյի հետ միաժամանակ թուրքական մայրաքաղաքում էր գտնվում ֆրանսիական դեսպլանության քարտուղար Ֆրանսուա Պետի Դեկրուան: Նա Արևելք էր ուղարկվել դեռևս 1670 թ. Նա Պոլսում էր գտնվում 1676—1680 թ.: 1684 թ. նա Փարիզում հրատարակում է իր հուշերը²⁶, որոնք պարունակում են հետաքրքիր ու արժեքավոր նյութեր թուրքական կառավարչական, պետական պաշտոնների, բանակի, ֆինանսների, Պոլսի բնակչության, ի թիվս որոնց և հայերի մասին:

1672—1673 թթ., որպես ֆրանսիական դեսպան մարքիզ դե Նուանտելի անձնական քարտուղար, Պոլսում էր գտնվում արևելագետ-սեմագետ Անտուան Գալլանը: Նա թողել է մեզ իր օրագիրը, որը հրատարակվում է 1681 թ. Փարիզում Շառլ Շեֆերի կողմից²⁷: Այստեղ հեղինակը հիմնականում կանգ է առնում ֆրանկո-թուրքական քաղաքական հարաբերությունների վրա, և դրա հետ մեկտեղ տեղեկություններ է հաղորդում Պոլսի բնակչության առօրյա կյանքի, կենցաղի ու սովորությունների մասին: Օրագրում Ա. Գալլանը տալիս է իր ժամանակակից վեզիր Կարա Մուստաֆա փաշայի կենսագրությունը: Քանի որ խոսք հնաց դեսպան մարքիզ դե Նուանտելի մասին, ապա նշենք, որ XIX դարի վերջի ֆրանսիացի հայտնի պատմաբան Ալբեր Վանդալը հրատարակեց նրա ուղեգրությունները²⁸, որ կան խիստ հետաքրքիր նյութեր՝ կապված չեռնովիկոս XIV-ի արևելյան քաղաքականության հետ. այնտեղ խոսվում է Կրետեի կամ Կանդիայի պատերազմին (1645—1669 թթ.) Ֆրանսիայի մասնակցության, ֆրանկո-թուրքական հարաբերությունների սրման և արևելյան քրիստոնյաների, ի թիվս որոնց հայերի, Ֆրանսիայից ակնկալած օգնության մասին և այլն, և այլն:

XVII դարի 60—80-ական թթ. Նվրոպայի տարբեր երկրներում լույս են տեսնում տարբեր բնույթի տրակտատներ (էտաներ) և պատմական աշխատություններ Թուրքիայի մասին, առանց որոնց ուսումնասիրության հնարավոր չէր լինի ամբողջական պատկերացում կազմել հայ ժողովրդի իրավաքաղաքական վիճակի մասին Օսմանյան կայսրության պետական սահմաններում: Այդպիսի աշխատությունների շարքին են պատկանում Նիկոլուզ Մաքիավելու²⁹, Դյու Լուարի³⁰,

siers et ses divers sectes de religieux, leur discipline militaire avec une supputation exacte de leur force par mer et par terre et du revenu de l'état. Traduit de l'anglois de monsieur Ricaut. Paris, 1670.

²⁵ Histoire des trois derniers empereurs des Turcs, depuis 1323 jusqu'à 1677. Traduite de l'anglais du sieur Ricaut. T. I—IV, Paris, 1683.

²⁶ François Petit de la Croix. Mémoires du sieur de la Croix. Paris, 1684.

²⁷ Journal d'Antoine Galland pendant son séjour à Constantinople (1672—1673). publié et annoté par Charles Schéfer. T. I—II, Paris, 1881.

²⁸ Les voyages de marquis de Nointel (1670—1680) par Albert Vandal. Paris, 1900.

²⁹ Nic. Machiaveli. Political reflexions upon the government of the Turks. London, 1656.

³⁰ Les voyages du sieur du Loir. Paris, 1654.

ժակ դե ժանտի³¹, Միշել Ֆեբուրի³², դե Շասեպոե³³, Դյու Վինյոյի³⁴, դե լա Մագդալենի³⁵ ու ալլոց տրակտատները, Առանձնապես պետք է առանձնացնել Միշել Ֆեբուրի պատմական աշխատությունները, որտեղ խիստ ընդարձակ են հայերի մասին եղած հաղորդումները:

Միշել Ֆեբուրի Քուրբեյի մասին գրած ուսումնասիրությունը ոչ այլ ինչ է, քան մի կոչ՝ ուղղված «ամենտորիստության» արքային՝ Լյուդովիկոս XIV-ին, նվաճելու Մերձավոր Արևելքը: Հեղինակը Քուրբեյի կայսրությունը ներկայացնում է վատթարագույն գույներով ու իրեն մի պա՛թ թվում է, որ Լյուդովիկոս XIV-ը, հենվելով Արևելքում քրիստոնյա հպատակների օգնության ու աջակցության վրա, Ֆրանսիայի դրոշմ կպարզի Օսմանյան կայսրության փլատակների վրա: «Դուր, Ձերը Մեծություն,— Լյուդովիկոս XIV-ին դիմելով, գրում է Մ. Ֆեբուրը,— որ միշտ էլ համարվել եք թուրքական հողերի ապագա նվաճողը, եվրոպայում Ձեր [վերջին] հաղթանակների ալմուզի ներքո հույսեր եք ներշնչում [քրիստոնյա հպատակների մեջ], որ Դուք աչքի թիչ խուլընդոտներով ու ավելի մեծ փառքով մի օր նվաճելու եք Արևելքը»³⁶:

Միշել Ֆեբուրը Քուրբեյի մասին ապրել է տասներկու տարի, սովորել է, համաձայն գրքի հրատարակչի հավաստիացման, թուրքերեն, արաբերեն, քրդերեն, մի հանգամանք, որ ուսումնասիրության տալիս է արժանահավատություն: Հավանաբար դա է պատճառը, որ դեռևս իր կենդանության ժամանակ այդ դիրքն ունեցավ նաև իտալերեն ու գերմաներեն հրատարակություն:

XVII դարի 60—80-ական թթ. Արևելքի պատմության ուսումնասիրության համար որոշակի արժեք են ներկայացնում Եվրոպացի հեղինակների՝ գերազանցապես իրան կատարած ուղևորությունների մասին հուշերը: Դրանց թվին են պատկանում, նախ և առաջ, Լա Բուլլեյ լա Գուլի³⁷, Ժ. Տեվենոյի³⁸, Ժ. Շարդենի³⁹, Պետրոս Պետիկի⁴⁰, Ժ. Ստրույսի⁴¹, Ն. Սանսոնի⁴², երեք կախիլիկ միսիոներների ու ալլոց ուղևորությունները:

³¹ Jacques de Jant. L'histoire du prince Osman, fils du sultan Ibrahim. Paris, 1670.

³² Michel Febvre. L'état présent de la Turquie..., Paris, 1675; Théâtre de la Turquie où sont représentées les choses les plus remarquables qui s'y passent aujourd'hui avec les mœurs, le gouvernement, les coutumes et la religion des Turcs et des treize autres sortes de nations qui habitent dans l'empire ottoman. Traduit de l'italien par le sieur Michel le Febvre. Paris, 1687.

³³ De Chassepoe. Histoire des grands vizirs. Paris, 1676.

³⁴ Du Vigneau. L'état présent de la puissance ottomane avec les causes de son accroissement et celles de sa décadence. Paris, 1678.

³⁵ De la Magdalaïne. Le miroir de l'empire ottoman ou l'état présent de la cour et de la milice du grand seigneur. Paris, 1681.

³⁶ Michel Febvre. Op. cit., p. I—II.

³⁷ Les voyages et observations du Sieur de la Boullaye Le Gouz. Paris, 1653. Երկրորդ հրատարակությունը՝ Paris, 1657:

³⁸ Jean Thévénot. Relation d'un voyage fait au Levant dans laquelle il est curieusement traité des Etats sujets au Grand Seigneur, des mœurs, religions, forces, gouvernements politiques, langues et coutumes de ce grand empire. Paris, 1664. Ժ. Տեվենոյի սույն աշխատությունն ունեցել է մի շարք հրատարակություններ: 1689 թ. Ռուսներում՝ հինգ հատորով, Ամստերդամում՝ 1705, 1725 և 1727 թ. հրատարակություններ: XVII դարի վերջին լույս են տեսնում նաև անգլիական, հոլանդական, և գերմանական հրատարակությունները: Մեր ձևերի առկ է Ամստերդամի 1727 թ. հրատարակությունը:

³⁹ Jean Chardin. Voyages en Perse et autres lieux de l'Orient tome I—X, Paris, 1811. Idem. Récit du couronnement du roi de Perse Soliman III, Paris, 1671.

⁴⁰ Bedros Bedik. Cehil Sutun. Viennae, 1678.

⁴¹ Առաջին անգամ Ժան Ստրույսի աշխատությունը լույս է տեսնում հոլանդերեն 1677 թ. պապ թարգմանվում է ֆրանսիերեն և լույս է տեսնում Ամստերդամում 1681 թ., կրճատված՝ 1682 թ. և դարձյալ Ամստերդամում 1718 և 1720 թթ. ու վերնագրված է այսպես. «Les voyages de Jean Struys en Moscovie, en Tartarie, en Perse, aux Indes et en plusieurs autres pais étrangers».

⁴² Nicolas Sanson. Voyage ou relation de l'état present du royaume de Perse. Paris, 1695.

Ֆրանսուա դե լա Բուլլեյ լե Գուլը ծնվել էր Ֆրանսիայի Բոմե քաղաքում 1610 թ., մահացել է Սպահանում 1669 թ.։ Լե Գուլը, ղեկն հրիտասարդ հառակում, ձեռնարկում է ճանապարհորդություն դեպի Արևելք։ Նա Վենետիկից ուղևորվում է Կոստանդնուպոլիս ու Փոքր Ասիայի և Հայաստանի վրայով հասնում Սպահան։ Որոշ ժամանակ Իրանում ապրելուց հետո նա մեկնում է Հնդկաստան, իսկ այնուհետև վերադառնում հայրենիք։ Լա Բուլլեյ լե Գուլի ուղեգրությունը գրված է առանց մի որևէ մեթոդական սկզբունքի, վատ ոճով և Ամասիայի, էրզրումի, Հասան-Կալայի, էջմիածնի, Երևանի, Թավրիզի մասին նրա հաղորդած վկայությունները խիստ համոզող են ու գիտական լուրջ արժեք չեն ներկայացնում։

Իսկ դրան հակառակ ժան Տեվենոյի ուղեգրությունը XVII դարի ամենակարևորագույն աղբյուրների շարքն է դասվում թե՛ նյութերի առատության և թե՛ հեղինակի կատարած նուրբ դիտողությունների առումով։ Ժան Տեվենոն ծնվել էր Փարիզում 1633 թ. հունիսի 7-ին, մահացել իրանական Աղբերջանում 1667 թ. նոյեմբերի 28-ին։ 1655 թ. նա մեկնում է Կոստանդնուպոլիս, այնտեղ մնում է մի տարի ու հաջորդ տարի ապրիլին վերադառնում Փարիզ։ Յոթ տարի անց նա ձեռնարկում է իր երկրորդ ուղևորությունը Արևելք և Բաղդադի վրայով գալիս է Իրան։ Սպահանում նա հինգ ամիս շարունակ լինում է հայր Ռաֆայել դյու Մանի հյուրը։ 1667 թ. Պերսեպոլիսի ավերակները ուսումնասիրելիս հանդիպում է Նարդենին և Տավերնիեին։ Այնուհետև նա որոշում է վերադառնալ հայրենիք՝ Հյուսիսային Իրանի վրայով, ուր և կնքում է իր մահկանացուն։

Իրանի, իրանահայերի, Պոլսի և պոսահայերի մասին ժան Տեվենոյի տվյալները միանգամայն ստույգ են։ Հեղինակը բավականին սովորել էր թուրքերեն ու պարսկերեն և պատահական չէ, որ արեւելյան անձնանունների, տեղանունների և տերմինների տառադարձությունը մեծ մասամբ տրվել է ճիշտ։ Ուղեգրությունը գրված է կենդանի ու վառ լեզվով։ Իրանի մասին նա իր գիտելիքների մի զգալի մասը իմացել է հայր Ռաֆայել դյու Մանից։

Ինչ վերաբերում է ժան Շարդենին, ապա մասնագետների համընդհանուր կարծիքի համաձայն, սեփյան Իրանի վարչական, հասարակական-քաղաքական և այլ հարցերին նվիրված նրա բազմաթիվ աշխատությունները համարվում է դասական ու լավագույնը XVII—XVIII դդ. ողջ եվրոպական գրականության մեջ։ Կարելի է առանց չափազանցության ասել, որ ժան Շարդենի ուղեգրություններում մասնագետ ընթերցողը կհանդիպի բազմակողմանի տեղեկությունների։

Ժան Շարդենը ծնվել է Փարիզում 1643 թ. հունվարի 24-ին, դավանանքով բողոքական հարուստ ոսկերիչի ընտանիքում, մահացել է Լոնդոնում 1713 թ.։ 1664 թ. ժ. Շարդենը առևտրական նպատակներով հոր կողմից ուղարկվում է Սուրաթ։ Հնդկաստան նա ուղևորվում է Իրանի վրայով։ Այս ճանապարհորդությունը կարճ է տևում։ Վերադառնալով Փարիզ, նա այստեղ երկար չի մնում։ 1665 թ. նա նորից ուղևորվում է վերջնում դեպի Իրան, ուր այս անգամ մնում է հինգ տարի և հիմնավոր կերպով սովորում է պարսկերեն լեզուն։ 1660 թ. նա շահ Աբաս II-ի կողմից ստանում է շահական վաճառականի կոչում։ 1670 թ. վերադառնալով Փարիզ, նա հրատարակում է իր «Պարսկաստանի թագավոր Սուլեյման III-ի թագադրումը և թե ինչ հիշարժան դեպքեր տեղի ունեցան նրա իշխանության առաջին երկու տարիներին» վերնագրված աշխատությունը։ 1671 թ. Ժան Շարդենը դարձյալ մեկնեց Իրան, իր հետ տանելով մեծ քանակությամբ թանկարժեք քարեր և Իրանի համար հազվագյուտ իրեր։ Այս անգամ նա Իրանում մնաց շուրջ տասը տարի։ 1681 թ. գալով Անգլիա ժան Շարդենը անգլիական թագավոր Կարլոս II-ի կողմից նշանակվում է Արևելահնդկական ընկերության ներկայացուցիչը Հոլանդիայում։

Իր ուղեգրությունների առաջաբանում ժան Շարդենը տալիս է հետևյալ ուղագրավ ինքնակենսագրական տվյալները. «Ես Փարիզից մեկնեցի առաջին ճանապարհորդության 1664 թ. և այնտեղ վերադարձա 1670 թ.՝ վեց ամբողջական տարիներ մնալով Արևելքում, ոսկալն մեծ մասամբ Պարսկաստանում, որտեղ իմ [առևտրական] գործերը ինձ առանձնապես կապում էին։ Ես այս ճանապարհորդությունից ունեմ ավելի շատ հուշեր, քան որևէ այլ մի ճանապարհորդ, որոնք ինձ նախորդել էին այս ուղու վրա և ես ավելի գիտեի պարսկերենը, քան մինչ այդ բոլոր նրանք, ովքեր տվել էին այս մեծ թագավորության մասնակի նկարագրությունը»⁴³, նրկրորդ ճանապարհորդության ընթացքում (1671—1677 թթ.) — գրում է ժ. Շարդենը. — ես չանցի իմ ողջ ժամանակը, «...ինչքան դա ինձ հնարավոր եղավ, օգտագործել ուսումնասիրելու երկրի լեզուն, ավելի ստույգ իմանալու նրա ժողովուրդների կենցաղն ու սովորույթները, կանոնավոր կերպով հաճախելու պալատ և այստեղ գրուցելու մեծամեծների և գիտնականների հետ, որպեսզի

⁴³ Jean Chardin. I, préface, p. I—II.

խնամքով ուսումնասիրեմ այն ամենը, ինչ կարող է արժանալի եվրոպայի հետաքրքրության-
նր 44, Ժ. Շարդենը այն աստիճան է ուսումնասիրում Լորանը, որ գրում է, թե ինքը «...Սպահա-
նը ավելի լավ գիտի, քան Լոնդոնը, չնայած այնտեղ ապրում է ահա քսանվեց տարուց ի վեր» 45:

Ինչ վերաբերում է աշխատության բովանդակությանը, ապա ինքը Ժ. Շարդենը դարձյալ առաջարկում տալիս է Հետևյալ բացատրությունը. «Բաժանված է տասը հատորների. առաջին հատորը մի սեռակ օրագիր է այն ամենի մասին, թե ինչ պատահեց ինձ հետ կամ թե ինչ առա-
մի ուղևորով երևույթների հանդիպելի իմ ճանապարհորդության ընթացքում Փարիզից մինչև Միսգրեյի: Երկրորդը այս օրագրի շարունակությունն է Միսգրեյից մինչև Բավերիզ. եր-
րորդը՝ Բավերիզից մինչև Սպահան: Այս երեք հատորները պարունակում են Փարիզից մինչև Սպահան կատարած ճանապարհորդության նոտագրման ողջ բովանդակությունը: Զորորդը հա-
տորդ ընդգրկում է Պարսկաստանի կայսրության, նրա կառավարության, նրա ժողովրդի, նրա
լիակության կենցաղի ու սովորությունների համընդհանուր նկարագրությունը: Հինգերորդը՝
սլավոնների գիտության ու արվեստների, նրանց արտադրության նկարագրությունն է. վեցե-
րորդը՝ նրանց քաղաքական-ուղղմական և քաղաքացիական կառավարության նկարագրությունն է. յոթերորդը՝ նրանց կրոնի ու դավանանքի նկարագրությունն է. ութերորդը՝ Պարսկաստանի
աշխարհաշար Սպահանի հատուկ նկարագրությունն է...» 46: Վերջապես իններորդ և տասներորդ
հատորներն ընդգրկում են 1674 թ. հեղինակի Սպահանից դեպի Բենդեր-Աբաս և Պերսեպոլիս
պատրած ուղևորությունների նկարագրությունը:

Չնայած թույլ տված որոշ անճշտություններին ու թյուրիմացություններին, Ժան Շարդենի
ուղևորությունները որոշակի գիտական արժեք են ներկայացնում ոչ միայն Սեֆյան Իրանի,
այլև Հայաստանի պատմության ուսումնասիրության համար:

Պետրոս Պետիկը, ծագումով Կիլիկիայի Քիլիս քաղաքից, կաթոլիկական հայ ընտանիքի
դավակ էր: Փոքր հասակում նա ղրկվում է հորից: Կրթությունն ստանում է Հռոմում: Ուսումն
աւարտելուց հետո պապի ներկայացուցիչ Մատթեոս Ավանիացու հետ մեկնում է Իրան պապի.
Ֆրանսիական քաղաքների և Վենետիկի դուքսի նամակները շահին հանձնելու համար: Եվրո-
պա վերադառնալով նա գրում է «Ջեհիլ սուլթան» (բառասուն սյուն) կոչված աշխատությունը:
Իրբը արժանահավատ տեղեկություններ է պարունակում իրանահայ կյանքի, հայ խոջայու-
թյան, հայ հասարակական շարժումների վերաբերյալ: «Մանոթանալով Պետիկի գրքին, — գրում
է Աշ. Հովհաննիսյանը, — դժվար չէ համոզվել, որ քաղաքական և իդեալական իր բովանդակու-
թյամբ, ընդհանուր առմամբ դա արժանահավատ մի փաստագրություն է և կարևոր մի աղ-
բյուր՝ 1675—1678 թվականների հայ ազատագրական մտքի պատմության տեսակետից նշա-
նակալից իրադարձությունների լուսաբանության համար» 47:

Յանս Կանեցսոն Ստրասուր կամ Ստրոյսը հոլանդացի նավաստի էր: 1656 թ. Կանգիայի
պատերազմի ժամանակ մասնակցել էր Դարդանելի ծովամարտին, որ թուրքական ռազմական
նավատորմը ոչնչացվեց: 1668 թ. նա ընդունվում է Մոսկովյան պետության ծառայության, որ
տև ժամանակ հավաքագրում էին օտարերկրացի նավաստիներին Կասպից ծովի առևտրական
նավատորմի կառուցման համար: Նավատորմը ստեղծվում էր իրանական բռնադատության
առաջնորդությամբ: Այդ նպատակով, ինչպես հայտնի է, 1667 թ. Ռուսաստանը առևտրա-
կան պայմանագիր կնքեց Նոր Զուղայի հայ առևտրական ընկերության հետ: 1670 թ. ամռանը
մի խումբ ընկերների հետ Ստրոյսը Աստրախանից ուղևորվում է դեպի Կասպից ծով: Տար-
կում գերի է ընկնում տեղացի մի ֆեոդալի մոտ և ստրուկ վիճակում դեգերում է Երևանում,
Դերբենդում, Շամախիում և այլուր: Փրկագնով ազատվելուց հետո Ստրոյսը ծառայության մեջ
է մտնում Լորանի լեհական զենսպանի մոտ, որի հետ ճանապարհորդում է Արդեբիլ, Ղազվին,
Ուլաֆան ուղիով ու մանրամասն նկարագրում Իրանի քաղաքական-հասարակական կացություն-
ներ XVII դարի 70-ական թթ.:

Յան Ստրոյսի ուղևորությունը լայն ճանաչում է գտնում եվրոպայում ու թարգմանվում մի
շարք եվրոպական լեզուներով: Հայ ժողովրդի պատմության տեսակետից հետաքրքրություն են
ներկայացնում Յան Ստրոյսի ուղևորության այն էջերը, որ խոսվում է Անդրկովկասի հայա-
շատ քաղաքների ու հատկապես Նոր Զուղայի հայության մասին:

44 Նույն տեղում, էջ II—III:

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում:

47 Ա. Հ. Հովհաննիսյան. Դրվագներ..., Բ, էջ 199:

Նիկ. Սանսոնը միսիոներական առաքելությամբ Իրան ժամանեց 1683 թ.: Այստեղ նա օգնություն հայերեն, պարսկերեն և թուրքերեն լեզուները, սակայն արևելյան լեզուներից նրա կատարած տառադարձությունից դատելով կարելի է եղրակացնել, որ նա մատնանշված երեք լեզուներից ոչ մեկն էլ հիմնավոր չգիտեր: Մյուս կողմից, Նիկ. Սանսոնի մոտ որևէ նոր վկայություն չկա Իրանի մասին, որը չի կրկնում, ասենք, Ժ. Բ. Տավերնիեի, Ժ. Շարդենի ու այլոց մոտ: Այսուհանդերձ, այս աղբյուրը հաստատում է նախորդ հեղինակների հաղորդած տեղեկությունները:

հանի որ խոսք գնաց կաթոլիկ միսիոներների մասին, անդրադառնաք Իրանում և հայերի միջավայրում երկար տարիներ ապրած նրանցից մի քանիսի թողած պատմական երկասիրություններին, որոնք վաղուց արդեն գրավել են պատմաբան-մասնագետների ուշադրությունը: Ճկատի ունենք հայր Գարրիել դե Շինոնի⁴⁸ և հայր Ռաֆայել դյու Մանի⁴⁹ ու այլոց աշխատությունները:

Հայր Գարրիել դե Շինոնը ապրել է շուրջ քսան տարի Սպահանի կապուչինների վանքում ու եղել է հայր Ռաֆայել դյու Մանի մերձավորագույն գործընկերներից մեկը: Նա սովորել է պարսկերեն, թուրքերեն և հայերեն լեզուները: Խոսելով հայերենի մասին, գե Շինոնը, ընկնելով չափազանցությունների մեջ, նշում է, որ իբրեւ... հայոց լեզուն Արևելքի, գուցե և աշխարհի ամենագեղար լեզուներից մեկն է⁵⁰: Դե Շինոնը նոր Զուլալյի հայերի մեջ երկպառակություններ է սերմանել, որի հետևանքով հայ համայնքի ներկայացուցիչների խիստ բողոքի հիման վրա կառավարության ներկայացուցիչները նրան տեղափոխել են Թավրիզ: Շինոնը սուր հարձակումներ է գործում «հերձվածող» հայերի դեմ, որոնց միակ ժամեղբւս եղել է այն, որ չեն ենթարկվել կաթոլիկական պրոպագանդային: Ըստ չեմ կարծում,— գրում է նա,— թե աշխարհում գտնվի մի այլ ժողովուրդ, որը ավելի կապված լիներ իր ավանդություններին, քան հայերը⁵¹:

Հայր Ռաֆայելը (Ժակ Դյուտերտը) ծնվել է Ֆրանսիայի Ման քաղաքում 1613 թ. օգոստոսին: Երիտասարդ հասակում ստանում է լավ կրթություն. հատկապես աչքի է ընկել մաթեմատիկայի բնագավառում: Նա քառասուն տարի ապրել է Սպահանում և եղել է կապուչինների վերատեսուչը, վալելի է ինչպես ֆրանսիական արքունիքի, այնպես էլ Իրանի տիրակալների (սկսած Աբաս II-ից մինչև շահ Հյուսեյնը) հովանավորությունը: Ռաֆայել դյու Մանի մասին առաջին անգամ հիշատակում է Ժ. Բ. Տավերնիեն 1644 թ. ուղևորության ժամանակ:

Իրանական արքունիքի հետ ամենասերտ կապեր ունենալով՝ դյու Մանը քաջատեղյակ էր թուրք-իրանական քաղաքական հարաբերություններին XVII դարի երկրորդ կեսին: Ռաֆայել դյու Մանի «Պարսկաստանի վիճակը 1660 թվականին» աշխատությունը գրված էր հատուկ կոլլեքթի համար, որը, ինչպես տեսանք, ձգտում էր ընդլայնել ֆրանսիական առևտուրը Արևելքում:

Ռաֆայել դյու Մանի գրքի վերջում կցված է խիստ արժեքավոր մի հավելված, ուր տեղ է դրել թուրքերի դեմ Սեֆյան շահ Իսմաիլի տարած հաղթանակների՝ իտալացի Ռոտայի կողմից գրված պատմության ֆրանսերեն թարգմանությունը: Այս թարգմանությունից հետո գրքի հրատարակիչ Շառլ Շեֆերը զետեղել է Իրանից ու Երևանից Ֆրանսիայի կառավարության ներկայացուցիչներ դե Լալենի և դե Լա Բուլլեյ դե Գուլի հղած նամակները Լյուդովիկոս XIV-ին: Վերջում տրվում է Ժ. Բ. Տավերնիեի հուշագիրը Իրանի առևտրի վերաբերյալ⁵²:

Հայաստանում և իրանահայերի մեջ XVII դարի վերջին քառորդին միսիոներական գործունեության պատմության ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուր է 1694 թ. Փարիզում լույս տեսած «Հայաստանի ներկա վիճակը, ինչպես՝ աշխարհի, այնպես էլ հոգևոր առումով» վերնագրված աշխատությունը⁵³. Հրատարակիչն է ճիզվիտների կենտրոնի ղեկա-

⁴⁸ P. Gabriel de Chinnon. Relations nouvelles du Levant ou traités de la religion, du gouvernement et des coutumes des Perses, des Arméniens et des Gaures. Lyon, 1671.

⁴⁹ [Raphael du Mans]. Etat de la Perse en 1660.

⁵⁰ Gabriel de Chinnon, p. 239.

⁵¹ Նույն տեղում, էջ 271:

⁵² S^t Raphael du Mans. Appendice, p. 259-356.

⁵³ Etat présent de l'Arménie, tant pour le temporel que pour le spirituel. Avec une description du pays et des moeurs de ceux qui l'habitent par le Père Th. Ch. Fleuriau. Paris, 1694.

վարենքից թոճա Շառլ Ֆլեորին: Գրքի առաջաբանում ճիշդիտ միսիոներների նամակներից քաղվածքներ են բերված՝ բնութագրելու համար հայ ժողովրդին. «Աշխարհում քիչ ժողովուրդ կգտնվի,— ասվում է ղեկուցագրում,— որ հայ ժողովրդի նման լավագույն բարեմասնություններ ունենա: Ամենուր նշմարելի է, որ հայերը մեծ ողջամտություն և խոհականություն ունեն: Նրանք քիչ են խոսում, շատ են խորհրդակցում ու իրենց ձեռնարկած բնագավառում մեծ հաջողություններ ունեն: Այդ նրանք են, որոնք անում են Արևելքի ողջ առևտուրը և մեծապես նրապատում են Եվրոպայի բազմաթիվ մեծ քաղաքների առևտրի բարգավաճմանը»⁵⁴:

Առաջաբանում հատուկ ընդգծվում է նաև հայերի ընթերցասիրությունը, գիտության նկատմամբ նրանց ծարավն ու հյուրասիրությունը. «Հայաստանի հերկա վիճակը...» աշխատության շնորհիվ մասնագիտ-պատմաբանները ոչ միայն որոշակի գաղափար կկազմեն Հայաստանում կաթոլիկ միսիոներների ծավալած քայքայիչ գործունեության մասին, այլև առանձին արժեքավոր վկայություններից անհրաժեշտ տեղեկություններ կբաղեն Հայաստանի հասարակական-տնտեսական և քաղաքական պատմության հարցերի վերաբերյալ:

«Հայաստանի հերկա վիճակը...» աշխատության յուրահատուկ շարունակությունը կարելի է համարել 1730 թ. Փարիզում լույս տեսած «Ճիշդիտական միաբանության մի միսիոների ճանապարհորդությունը Խուրբիույում, Պարսկաստանում, Հայաստանում, Արաբիայում և Բարբարիայում» վերնագրված գիրքը⁵⁵, ուր դարձյալ, որոշ մանրամասնություններով, տրվում է նույն ճիշդիտ միսիոներների գործունեությունը Հայաստանում XVIII դարի 80—90-ական թթ. Անանուս վերնագրի ունեցող այս աշխատության հեղինակը Վիլլոտն է, որն իր ժամանակին, նույնպես միսիոներական նպատակներով եղել է Հայաստանում: Վիլլոտի այս աշխատության համար դարձյալ աղբյուր են ծառայել կաթոլիկ միսիոներների նամակները Հայաստանից: Ուղեգրության մեջ տեղ են գտել նաև իրանի XVIII դարի 20-ական թթ. քաղաքական պատմությանը վերաբերող նյութեր, հայնաբար ներկայացված ականատեսի վկայությամբ⁵⁶: Գրքի վերջին մասում խոսվում է ճիշդիտ միսիոներների կողմից Նախիջևանի հայ կաթոլիկ համայնքի այցելության ընթացքում իրանական հարկահավաքների թույլ տված բռնությունների, կամայականությունների և հայ կանանց ընդվզումի մասին⁵⁷: Ուղեգրության մեջ կարելի է հանդիպել նաև Հայաստանի հասարակական, տնտեսական և քաղաքական պատմությանը վերաբերող ալլ բնույթի նյութերի:

Խոսելով Հայաստանում միսիոներական գործունեության մասին, չի կարելի դանց առնել ամենակարևորագույն աղբյուրներից մեկը՝ Թեատինյան կրոնավոր Կղեմես Գալանոսի «Միաբանություն հայոց սուրբ Եկեղեցույն ընդ մեծի Սուրբ Եկեղեցույն Հռոմալ» աշխատությունը, որը լույս տեսավ Հռոմում լատիներեն թարգմանությամբ⁵⁸: Կղեմես Գալանոսը Ուրբանոս VIII պապի կողմից 1626 թ. Կոփկաս էլ ուղարկվել վրացիների և հայերի մեջ կաթոլիկություն տարածելու առաքելությամբ: Այնուհետև նա 1640 թ. անցնում է Պոլիս, ուր և հիմնավորապես սովորում է հայոց լեզուն: Կղեմես Գալանոսը իր բուռն բնավորությամբ և հայ եկեղեցու նկատմամբ ունեցած շրջադարձած ատկության մասին ասացել է հայ հասարակայնության զայրույթը: Կաթոլիկ պրոպագանդայի կողմից նա անվանվել է «աստծու խաղաղանք» Արևելքի հերձվածողների ներկայությամբ: Նրա մոտ ի մի էին ձուլված կիրքն ու նենգությունը, ճարտարությունն ու խարդավանքը: «Այս հոգևոր գործիչն արդեն բոլորովին մի ուրիշ երևույթ է ներկայացնում իր անսովոր խանդով և ընդունակություններով,— նրա մասին գրում է Լեոն,— բայց մանավանդ իր խառնվածքով: Նա 1636 թ. ուղարկված էր Վրաստան, ուր քաղաքական պաշտոնը ծածկում էր քոչվի մասնագիտության տակ: Վրացիների մեջ նա երկար չմնաց, այլ սովորելով հայերեն լեզուն, սկսեց հայերի մեջ «աստծու հունձը» մի հոանդով, որ միանգամայն պակասում էր Պիրոմալին (իր նախորդին—Մ. Զ.) և մի հարակցությամբ, որ միայն եզրիտներին կարող էր պա-

⁵⁴ Նույն տեղում, էջ 6:

⁵⁵ Voyages d'un missionnaire de la compagnie de Jésus en Turquie, en Perse, en Arménie et en Barbarie. Paris, 1730.

⁵⁶ Նույն տեղում, էջ 67—80:

⁵⁷ Նույն տեղում, էջ 248—258:

⁵⁸ St' u Cl. Galan u s. Consiliatio ecclesiae Armenae cum Romanae. Vol. I—III, Roma, 1650—1654. Ունի նաև այլ լատիներեն աշխատություններ հարցի շուրջը՝ Historia armenae ecclesiastica et politica. Coloniae, 1686.

տիվ բերել, Իր Հայերենագիտությունը նա ծառայեցրեց միսիոներական նպատակներին, հորինելով կրոնական վիճաբանությունների գրքեր»⁵⁹:

XVII դարի վերջին քառորդին (1693—1698 թթ.) է վերաբերում իտալացի Կարլո Ջեմելի-Կարերի ճանապարհորդությունը Արևելքում, ներառյալ նաև Հայաստանում: Նա այցելել է էրզրում, Կարս, Երևան, Նախիջևան և Հայերի մասին հաղորդում է ուշագրավ տեղեկություններ⁶⁰:

Նվա մի հրկու աղբյուրներում խոսք է գնում հումեական եկեղեցու հետ հայերի դավանաբանական վեճերի, միսիոներների գործունեություն և համայնյան տիրապետության ներքո հայ եկեղեցու իրավական ստատուսի հետ կապված հարցերի մասին: Դրանք Դելակրուայի⁶¹ և Լա-կրոզի⁶² աշխատություններն են:

XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ ժողովրդի պատմությանը վերաբերող եվրոպական աղբյուրների մեջ կարևորագույն տեղ է զբաղում Պիտտոն դե Տուրնեֆորի ուղեգրությունը⁶³, Պիտտոն դե Տուրնեֆորը (1656—1708) աղեկականական ծագում ունեցող ֆրանսիացի ակադեմիկոս Բուսարան Լը և 1691 թ. Ֆրանսիայի ակադեմիայի իսկական անդամ: 1700—1702 թթ. Տուրնեֆորը ֆրանսիական կառավարության առաջարկով կատարում է մեծ ճանապարհորդություն դեպի Փոքր Ասիա, Հայաստան և Անդրկովկաս, որտեղից նա Ֆրանսիա է բերում 1356 նոր տեսակի բույսեր և ղեղաբույսեր, որոնց մի զգալի մասը՝ պատմական Հայաստանի տարածքից (ուղեգրության մեջ բերված են այդ բույսերից նմուշներ, որոնք նկարված են հեղինակի կողմից): Այս առումով նա մեծ ծառայություն է մատուցել հայ բուսաբանությանը:

Պիտտոն դե Տուրնեֆորի ուղեգրությունը ներկայացված է Դրանսիայի պետական քարտուղար կոմս Ժերոմ դե Պոնշարտրենին հղված նամակների ձևով, ուր մանրամասն տեղեկություններ են հաղորդվում Քուրքիայի վարչատնտեսական կյանքի և Հայաստանի իրավիճակի մասին, ինչպես նաև պատմական էթնոկուրսներ են կատարվում դեպի Հայաստանի անցյալի պատմությունը՝ կապված աշխարհագրական միջավայրի աչս կամ այն տեղանվան հետ: Ուղեգրությանը կցված են պատմական Հայաստանի տարբեր քաղաքների հայերի տարազգ պատկերող գծանկարներ:

Պիտտոն դե Տուրնեֆորը ղուրս է գալիս Փարիզից 1700 թ. մարտի 9-ին, ժամանում Կոստանդնուպոլիս, ապա Մե ծովով մեկնում Տրապիզոն, այնուհետև Էրզրումի (հունիսի 15), Կարսի (հուլիսի 12—16) և Բիֆլիսի վրայով գալիս հասնում է Էջմիածին և Երևան (1701 թ. օգոստոս): Պիտտոն դե Տուրնեֆորը առաջին եվրոպացի ուղեգիրն էր, որ անհաջող լիործ կատարեց Բաբդրանուլու Արարատ լեռան գագաթը⁶⁴: Ուղեգիրը նկարագրում է Արարատ լեռան բուսական ու կենդանական աշխարհը և, ի դեպ, գրում է իրեն նանդիպած վագրերի մասին: Նա վերադառնում է Կարսի, Հասան Կալայի, Սերաստիայի, Թոխատի, Ամասիայի վրայով Զմյուռնիա, որտեղից մեկնում է Մարսել:

Պիտտոն դե Տուրնեֆորի ուղեգրությունը աչքի է ընկնում շոշափված նյութերի հարստությամբ, գիտականությամբ, հեղինակի արած նուրբ դիտողություններով և այլն: Հիացած Արարատյան դաշտովայրի բերք ու բարիքով, նա այդ վայրը, անշուշտ չափազանցելով, համարում էր «երկրային դրախտ»: Նա ջերմ խոսքեր է գրել նաև հայերի մասին, նշելով, որ «հայերը աշխարհի լավագույն մարդիկ են»⁶⁵: Հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողների համար առանձնապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայ վաճառականության և մասնավորապես Արևելքի և Արևմուտքի միջև առևտրի զարգացման ընդհանրապես նոր Զուլպյանի խոշալության կատարած դերի ու նշանակության մասին իր քսաներորդ նամակում Տուրնեֆորի արած

⁵⁹ Լեո. Հայոց պատմություն. հ. 9, Երևան, 1946, էջ 327:

⁶⁰ C. Gemelli-Careri. Voyages autour du monde. Paris, 1719.

⁶¹ La Croix. Etat présent des nations et églises grecques, arméniennes et maronites en Turquie. Paris, 1695.

⁶² M. V. La Crose. Histoire du christianisme d'Ethiopie et d'Arménie. Paris, 1739.

⁶³ Sté'p' Relation d'un voyage du Levant fait par ordre du roy, par M. Pitton de Tournefort. T. I—II, Paris, 1717.

⁶⁴ Նույն տեղում, էջ 357—359:

⁶⁵ Նույն տեղում, էջ 389—396:

դատողությունները⁶⁵։ Իվ առհասարակ պետք է նշել, որ նրա հաղորդած նյութերը բազմաբովանդակ են։

Պիտտոն պե հուրնեֆորի նրեկերում գտնվելու տարիներին Փոքր Ասիայում էր ճանապարհորդում հայկական նկարիչ Կորնելիզ լե Բրույնը կամ լե Բրենը (1652—1726)⁶⁷։ 1701—1708 թթ. ընթացքում նա կատարեց իր երկրորդ ուղևորությունը դեպի Իրան և Հնդկաստան Մոսկովյան տերության տարածքով։ Նա Իրան մեկնեց Ռուսաստանից հայ վաճառականների ուղեկցությամբ և ճանապարհին այցելեց Շամախի, Քավրիզ և Սպահան։ Անդրկովկասի ու Իրանի վերաբերյալ նրա հաղորդած նյութերի մեծ մասը վերաբերում է տեղական բնակչության կենցաղին, սովորույթներին, հավատալիքներին։ Նույնը կարելի է ասել նաև Թուրքիայի մասին զրաժ տվյալների վերաբերյալ։ Սակայն, այսուհանդերձ, լե Բրենի մոտ էլ կան վկայություններ, որոնք լրացնում են մեր գիտելիքները Թուրքիայի և Իրանի հասարակական-տնտեսական և լադարական կյանքի վերաբերյալ։

XVII դարի վերջի և XVIII դարի սուաշին քաղաքի Իրանի, ինչպես նաև իրանահայերի և Արևելյան Հայաստանի պատմության համար որոշակի արժեք են ներկայացնում Սպահանի կարմելիտների միաբանության նոթագրություններն⁶⁸ ու ճիզվիտ միսիոներների զեկուցագրերը, նամակները Իրանից⁶⁹։

Տվյալ ժամանակահատվածի պատմության համար եվրոպական պատմագրության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղում ևս երկու աշխատություն։ Առաջինը լեհ ճիզվիտ միսիոներ Յուզե Կրուշինսկու հուշերն են⁷⁰, իսկ մյուսը՝ եվրոպացի հեղինակ Մամիյ-Կլերայի «Իրանի պատմություն»-ը⁷¹։ Գրված նույն Կրուշինսկու և եվրոպացի ու թուրք բարձրաստիճան պաշտոնյաների ղեկուցագրերի հիման վրա⁷²։

Յուզե Կրուշինսկու, հուշերի հրատարակիչ Ժան Անթուան դու Սերսոն գրքի առաջաբանում հեղինակի մասին տալիս է շատ կարևոր կենսագրական տվյալներ։ Գիրքը, ասում է նա, հիմնված է ականատեսի վկայությունների վրա, «...քանզի ևս այն կազմեցի բացառապես լեհ ճիզվիտ հայր Յուզե Կրուշինսկու հուշերի հիման վրա, որը քան սարի Սպահանում ապրելուց հետո, այնտեղից դուրս եկավ [աֆղանիստների կողմից] քաղաքի պաշարման վերջում, և առիթից օգտվելով պիտի ասեմ, որ նա մասնավորապես իրադարձություններին ծանոթ էր խորությամբ»⁷²։ Նա, որպես թարգմանիչ, մասնակցում է շահական արքունիքի հետ եվրոպական այն պետությունների պատվիրակության ներկայացուցիչների վարած բանակցություններին, որոնք Հոռմի պապի, գերմանական կաթոլիկ ֆրանսիական թագավորի անունից նամակներ էին բերել շահին։ Այդ բանակցությունների ընթացքում նա ճարպկորեն պետական բարձրաստիճան պաշտոնյաներից ձեռք է բերել անհրաժեշտ տեղեկություններ Իրանի բաղադրական կազմության և շահ Հյուսեյնի ժամանակ իրանական ավատատիրական հասարակության ճգնաժամի մասին⁷³։ Իրանը աֆղանացիների կողմից գրավվելուց հետո հայր Կրուշինսկին կապեր է հաստատել նաև Իրանի նվաճողների հետ ու իմացել վերին աստիճանի հետաքրքիր ու ստույգ տեղեկություններ⁷⁴։ Նոր Զուղայի պաշարման ու այնուհետև գրավման ժամանակ հայր Կրուշինսկին գտնվել է նոր Զուղայի հիշվիտների տանը և հայերի գլխին պայթած աղետին նա եղել է անմիջական ականատես⁷⁵։ Հայր Կրուշինսկին, բժիշկ լինելով, բուժում է աֆղանական բարձրաստիճան պաշտոնյային, դառնում է նրա բարեկամն ու նրանից իմանում կարևորագույն տեղեկություններ աֆղանական ար-

⁶⁵ Sté'w Voyages au Levant, c'est-à-dire dans les principaux endroits de l'Asie Mineure dans les îles de Chio, Rhodes, Chypres etc... par Corneille le Brun. T. I—V, Paris, 1725.

⁶⁷ A Chronicle of the Carmelites in Persia. T. I—II, London, 1939.

⁶⁸ Նույն տեղում։

⁶⁹ Choix des lettres édifiantes... T. V, Missions du Levant, Paris, 1809.

⁷⁰ Histoire de la dernière révolution de Perse par le père Y. Krusinski. T. I—II, Paris, 1728.

⁷¹ Ma m i y e-C l a i r a c. Histoire de Perse depuis le commencement de ce siècle. T. I—III, Paris. 1750.

⁷² P. Y. Krusinski. Op. cit., p. 3.

⁷³ Նույն տեղում, էջ 4։

⁷⁴ Նույն տեղում, էջ 5։

⁷⁵ Նույն տեղում, էջ 54—112։

շաղանքի մասին: Հայր Կրուշինսկու հուշերը ժամանակագրական առումով հասնում են մինչև 1725 թ.: Հաջորդ տարիների Իրանի քաղաքական դեպքերը, ինչպես նաև 1727 թ. թուրքերի և Իրանի աֆղանական տիրակալ Աշրաֆի միջև կնքված պայմանագրի կետերը տրված են դարձյալ արժանահավատ աղբյուրների հիման վրա: Զիզվիտ միսիոներների հուշերի սկզբում տրվում է Սեֆյան հարստության քաղաքական պատմությունը շա՛հ Իսմայիլից մինչև շահ Հյուսեյնի տիրապետություն: Ընկած ժամանակաշրջանում, նա այդ դրել է Աղամ Օլեաբիտաի, Տավերնիեի, Շարդենի և, չի բացառված, նաև պարսկական ժամանակագրությունների հիման վրա: Այնուհետև մանրամասն ու գիտականորեն ստույգ պատմվում է շահ Հյուսեյնի ժամանակ Իրանում ծայր առած ճգնաժամի աղետարներ հետևանքների մասին երկրի ու նրա աշխատավոր բնակչության համար: Չափազանցություն չէր լինի ասել, որ Կրուշինսկու աշխատության այս հատվածը, նսայի կաթողիկոս Հասան Զալայանի «Աղվանից պատմության» հետ, պատկանում է Իրանի այս ժամանակահատվածի պատմության լավագույն աղբյուրների թվին:

Ինչ վերաբերում է Մամիլ-Կլերուսի «Պարսկաստանի պատմություն» եռհատոր աշխատությանը, ապա պետք է ուռել, որ աֆղանական տրշավների, ինչպես և նախորդ շրջանի Իրանի պատմության համար հիմնական աղբյուր դարձյալ ծառայել են Յ. Կրուշինսկու հուշերը: Իսրայել Օրու իրանական ղեկավարության մասին հաղորդված ընդարձակ վկայությունները⁷⁶ նույնպես վերցված են Կրուշինսկուց: 1725 թ. հաջորդող նյութերը, որոնք տեղ են գտել երկրորդ և երրորդ հատորներում, պատմական որոշակի արժեք ներկայացնող տարբեր բովանդակության ղեկուցագրեր են: Այդպիսիների շարքին են պատկանում՝ «Զեկույց Պարսկաստանում տեղի ունեցած տարբեր իրադարձությունների մասին, որը կաղմված է 1730 թվականին Սպահան արշաված մեծ Վեզիրին ներկայացված հաշվետվությունների հիման վրա»⁷⁷. «Մի թուրք լեֆենդիի կողմից գրված ու Կոստանդնուպոլսի վերջին խոտվությանը վերաբերող ղեկուցագրի թարգմանությունը, որին կցված են այս իրադարձության տարբեր պարագաներին՝ վերաբերող նյութեր, քաղված այլ հուշագրություններից»⁷⁸: Այստեղ պետք է նշել, որ երրորդ հատորի զգալի մասը նվիրված է 1730 թ. Կոստանդնուպոլսում Պատրոնա խալիլի բարձրացրած ապստամբությանը և ալղտեղ տեղեկություններ կան պոլսահայերի մասին: Հետաքրքրությունից զուրկ չեն, անշուշտ, այն էջերը, որոնք նվիրված են Թահմազկուլի խանի (հետագայում՝ Նադիր շահի)՝ թուրքերի դեմ մղած պատերազմների պատմությանը⁷⁹:

XVIII դարի սկզբի Օսմանյան կայսրության, հետևաբար նաև Արևմտյան Հայաստանի վերահսկող, Թուրքիայի փոխհարաբերությունները եվրոպական պետությունների հետ լուսաբանված են Թուրքիայի ֆրանսիական, անգլիական և այլ եվրոպական պետությունների ղեկավարների՝ իրենց կառավարությանը հղած ղեկուցագրերում, նամակներում, հուշերում և այլն: Այդ նյութերի մի մասը հրատարակված է: Այս առումով հատկապես ուշագրավ են 1717—1727 թթ. Պոլսում ֆրանսիական զենայան Բարոն դե Բոննակի⁸⁰, իսկ այնուհետև նրան այդ պաշտոնում փոխարինած մարքիզ դե Վիլնյուվի⁸¹ հուշերը, ղեկուցագրերը՝ վերջինս Պոլսում մնաց մինչև 1741 թ.: Այս երկու հեղինակների մոտ էլ կան նյութեր, որոնք անմիջական առնչություն ունեն հայ ժողովրդի պատմության հետ: Բացի այս բնույթի աղբյուրներից, տվյալ ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման համար կան Թուրքիայի քաղաքական պատմությանը նվիրված աշխատություններ, որոնցից կարելի է առանձնացնել մոլդովական իշխան Դիմիտրի Կանտեմիրի «Օսմանյան պատմություն»⁸², ֆրանսիացի ճանապարհորդ Օբրի դե Լա Մոտրեի (1674—1743) ուղեգրությունը⁸³ և այլն: Մատենաշղված վերջին երկու հեղինակներից կարելի է քաղել լրացուցիչ պատ-

⁷⁶ Mamiye-Clairac. Histoire de Perse. I, p. 47-57.

⁷⁷ Նույն տեղում. հ. 3, էջ 90—105.

⁷⁸ Նույն տեղում, էջ 119—250.

⁷⁹ Նույն տեղում, էջ 250—354.

⁸⁰ Mémoire historique sur l'ambassade de France a Constantinople par le marquis de Bonnac, publié avec un précis de ses négociations a la Porte ottomane, par M. Charles Schéfer, Paris, 1894.

⁸¹ Une ambassade française en Orient sous Louis XV. La mission du marquis de Villeneuve 1728—1741, par Albert Vandal. Paris, 1887.

⁸² Dimitri Cantémir. Histoire de l'empire ottoman. Paris, 1743.

⁸³ Motraye de la. Voyages de la Motraye en Europe, Asie et l'Afrique. Vol. I—II. La Haye, 1727.

մական նյութեր, որոնք դարձյալ այս կամ այն չափով աղերսվում են հայ ժողովրդի պատմության հետ:

Ֆրանսիական ղեկավարներ ղե Քոննակի և ղե Վիլնյովի ուղադրության կենտրոնում են եղել Ֆրանսիայի համար կարևոր երկու հարց՝ «հերձվածողներին», այսինքն Արևելքի քրիստոնյաներին կախովի դարձնելու և լեանտյան առևտրի հարցերը: XVIII դարի առաջին քառորդին պահանջային համայնքի ներսում ծայր առած ներհամայնքային պայքարի մասին այս երկու հեղինակները մոտ կան ուղադրավ վկայություններ: Հատկապես ղե Վիլնյովը ամենաեռանդուն մասնակցություն է ունեցել պոլսահայերի ներհամայնքային պայքարին: Բացի այդ, օգտվելով կապիտուլյացիաների հետևանքով Թուրքիայի վրա Ֆրանսիայի ունեցած ազդեցությունից, այս երկու ղեկավարները կարևոր դեր են խաղացել Թուրքիայի արտաքին քաղաքական պատմության մեջ: Ի՞նչ ղե Քոննակի միջնորդությամբ ստորագրվել է 1724 թ. հուլիսյան հուս-թուրքական համաձայնագիրը, այսպե՛ս ղե Վիլնյովը վճռական դեր է կատարել 1739 թ. հուս-թուրքական և հուս-ալանտուրիական բելգրադյան զույգ հաշտության պայմանագրերի կնքման հարցում:

XVIII դարի 30—40-ական թթ. թուրք-իրանական քաղաքական հարաբերությունների սլաշմուխները հնարավոր բոլոր մանրամասնություններով տրված է 1748 թ. Փարիզում լույս տեսած «Պարսկաստանի թագավոր Քահանգուլիի պատմություն» ստվարածավալ հատորի մեջ⁸⁴: Այն ընդգրկում է 1730—1738 թթ. ժամանակաշրջանը: Քահանգուլիի կողմից Արևելյան Հայաստանի նվաճման առիթով Հայաստանի մասին հաղորդվում են անհրաժեշտ տեղեկություններ: Աշխատությունը հիմնված է ոչ զբաղեցրած, օսմանյան և իրանական բարձրաստիճան պաշտոնյաների գեկուցագրերի վրա: Չի բացառված, որ այստեղ օգտագործված լինեն նաև օսմանյան ժամանակագրությունները, ականատեսների վկայությունները և այլն: Գրքում ուշադրավ տեղեկություններ կան նաև քրդերի ու Քրդստանի մասին⁸⁵: Ընդարձակ էջեր կան նաև զուլահայերի և այլն մասին, թե ինչպես Նադիր շահը ուղում էր վերականգնել Շահ-Արամի ժամանակ ջուղահայերի ձեռք բերած առևտրական իրավունքներն ու արտոնությունները⁸⁶:

1730 թ. Պատրոնա խալիլի Պոլսում բարձրացրած խռովության, Ահմեդ III-ի տապալման և Մահմուդ I-ի գահ բարձրացման, խռովության օրերին պոլսահայերի անցկացրած ահուսարուսիի և այլ հարակից հարցերի մասին է պատմում «Ջեկուցագիր 1730 և 1731 թվականների երկու ապստամբությունների մասին»⁸⁷ վերնագրով 1737 թ. Հատկապես հրատարակված գիրքը, որը տվյալ ժամանակաշրջանի արժանահավատ աղբյուրներից մեկն է: Այս նույն հարցերին է նվիրված նաև ղե Դրուվենակի 1740 թ. Փարիզում լույս տեսած աշխատությունը⁸⁸:

Նադիր շահի ժամանակ թուրք-իրանական տնտեսությունների պատմության կարևոր աղբյուրներից մեկն էլ կարելի է համարել ֆրանսիական արքայական ակադեմիայի անդամ Մ. Օտտերի երկհատոր ուղեգրությունն արևելքում⁸⁹: Հեղինակը, ինչպես ինքն է գրում, Պոլսում գտնվելու ժամանակ վայելել է ֆրանսիական ղեկավար ղե Վիլնյովի հովանավորությունն ու աջակցությունը: Իր ուղեգրության մեջ Մ. Օտտերը խոսում է 1736 թ. աշնանը իր այցելած Կիլիկիայի քաղաքներ Ադանայի, Տարսուսի, Սաի և այլ վայրերի մասին: Ապա անցնելով Քրդստանով ու պատմական Հայաստանի՝ քրդերի ազդեցության ոլորտում գտնվող տարածքով, տեղեկություններ է տալիս Բիթլիսի ու նրա հարակից շրջանների մասին: Մ. Օտտերի հաղորդած վկայություններից երևում է, որ նա տիրապետել է արևելյան լեզուներին և, ինչպես ինքն է գրում, իրանում գտնվելու քսան ամիսների ընթացքում «ես ժամանակ գտա սովորելու պարսկերեն լեզուն ու ծանոթանալու Պարսկաստանի ներկա վիճակին»⁹⁰: Մ. Օտտերի ուղեգրության առաջին հատորի

⁸⁴ Histoire de Thamas Koulikhan, roi de Perse, nouvelle édition. Paris, 1748.

⁸⁵ Նույն տեղում, էջ 150—152:

⁸⁶ Նույն տեղում, էջ 285—289:

⁸⁷ Relation des deux rebellions arrivées à Constantinople en 1730 et 31 dans la déposition d'Achmet III et l'élévation au throne de Mahomet V, composés sur des mémoires originaux reçus de Constantinople, La Haye, 1737.

⁸⁸ G r o u z e n a c d e. Histoire de la dernière révolution arrivée dans l'empire ottoman le 28 septembre 1730. Paris, 1740.

⁸⁹ Voyages en Turquie et en Perse avec une relation des expéditions de Tahmas Kouli-Khan, par M. Otter de l'académie royale des inscriptions et belle-lettres. T. I—II, Paris, 1748.

⁹⁰ M. Otter. Voyage en Turquie et en Perse. T. II, p. 1.

զղալի մասը նվիրված է թուրքերի դեմ նալիր շահի մղած պատերազմների պատմությանը⁹¹։ Գրված այնպիսի ստույգ աղբյուրների հիման վրա։ Այն ուկալում է աֆղանական արշավանքից ու հասցվում է մինչև 1739 թ. տեղի ունեցած իրադարձությունները։ Շարադրված քաղաքական պատմությունը շնչած համառոտ է, սակայն այնտեղ կան տեղեկություններ, որոնք բացակայում են Ռահմազկուլի խանի պատմությանը նվիրված, վերը հիշատակած մեր աշխատության մեջ։ Այսպես, Մ. Ոստերը վկայություններ ունի Այոնիքում և Թավրիզի մոտ թուրքական բանակին հայերի ցույց տված դիմադրության մասին⁹² և այլն։ Երկրորդ հատորը բացառապես նվիրված է 1739 թ. հեղինակի դեպի Պոլիս վերադարձի ուղևորության նկարագրությունը։ Ճանապարհը ընթանում էր Գիարբեքի, Արզնի, Խարբերդի վրայով դեպի Սերաստիայի նահանգը։ Հատկապես հետաքրքիր են այն էջերը, ուր խոսվում է Սերաստիայի նահանգում լեզվեն, ավաղակախմբերի խռովությունների, փաշայի բանակի կատարած կամայականությունների ու բռնությունների մասին։ Նա մի քանի անգամ գիշերել է հայկական տներում, ուր իրեն պատմել են հայ ժողովրդի կրած անլուր տառապանքների, զրկանքների մասին։

Արևելյան Հայաստանի 1720—50-ական թթ. քաղաքական պատմության ուսումնասիրության համար որոշ արժեք է ներկայացնում նաև Դրանսիայի հեղինակ գե Պեյսոնելի «Պարսկաստանի և Վրաստանի արդի խառնակությունների մասին ուսումնասիրության փորձ»⁹³ վերնադրով աշխատությունը։ Աշխատության մեջ մանրամասն շարադրված են Վրաստանի քաղաքական պատմության կարևորագույն փուլերը՝ վախժանգ VI-ից մինչև Հերակ II-ի ժամանակաշրջանը։ Վերջինս զույլը վերնադրված է այսպես. «Պարսկաստանի և Վրաստանի վիճակը ներկայիս 1753 թվականին»⁹⁴, այլ կերպ ասած, հեղինակը դեպքերը ընթերցողներին է ներկայացնում որպես ականատես վկա։

Նաղիր շահի ժամանակաշրջանի Արևելքի պատմության հարցերը շոշափված են նաև ժամանակակից մի քանի այլ հեղինակների կողմից, որոնք գտնվելով Արևելքում, մոտիկից ծանոթ էին թուրք-իրանական քաղաքական առնչություններին։ Այսպիսիներից էին, օրինակ, էտյեն Մինյոն⁹⁵, դե Սագրեդոն⁹⁶, Մ. Դելակրուան⁹⁷ և այլք։ Այս հեղինակների մոտ շոշափվում են ոչ միայն քաղաքական, այլև ևրբեմն հասարակական-տնտեսական պատմության հարցերը։

XVIII դարի 50—60-ական թթ. Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրության համար որոշակի արժեք են ներկայացնում Պոլսում Ֆրանսիայի դեսպան կոմս դե Սեն Պրիեստի⁹⁸, անգլիական դեսպաններ Հենրի Գրենվիլի⁹⁹ և Զեյմս Պորտերի¹⁰⁰ հուշերն ու աշխատությունները։ Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների իրենց կատարված շղթած գեկուցադրում մեծ տեղ է հատկացված այդ երկու երկրների լիանտյան առևտրին, սակայն այդ նույն

⁹¹ Նույն տեղում. հ. I, էջ 254—358։

⁹² Նույն տեղում, էջ 281—282։

⁹³ Essai sur les troubles actuels de Perse et de Géorgie, par M. de Peyssonnel. Paris, 1754։ Այս հեղինակը հետաքրքրվում էր Վրաստանի պատմությամբ ֆրանսիական առևտուրը Անգրիկովկասում և Իրանում զարգացնելու նպատակով։ Ինքն էլ հանդիսանում է 1787 թ. Փարիզում լույս տեսած «Տրակտատ Սև ծովի առևտրի մասին» (Traité sur le commerce de la mer Noire, par M. Peyson[n]el, ancien consul général de France a Smyrne) գրքի հեղինակը։

⁹⁴ Նույն տեղում, էջ 151—154։

⁹⁵ Histoire de l'empire ottoman depuis son origine jusqu'à la paix de Belgrade en 1740, par M. Mignot. T. I—IV, Paris, 1741.

⁹⁶ De Sàgredo. Histoire de L'empire ottoman. T. I—VII, Paris, 1732.

⁹⁷ M. de la Croix. Abrégé chronologique de l'histoire ottomane. T. I—III. Paris, 1758.

⁹⁸ M. le comte de Saint-Priest. Mémoires sur l'ambassade de France en Turquie et sur le commerce des français dans le Levant. Paris, 1877.

⁹⁹ Henry Grenville. Observations sur l'état actuel de l'empire ottoman, ed ited by Andrew S. Ehrenkretz. The university of Michigan press, 1971.

¹⁰⁰ Turkey, its history and progress. From the journals and correspondence of sir James Porter, continued to the present time with a memoir of sir James Porter by his grandson Georges Larpent. Vol. I—II, London, 1854; Réflexions sur l'état critique actuel de la puissance ottomane. Paris, 1765.

չեկուցագրերում հաղորդվում են այնպիսի տեղեկություններ, որոնք բարձրացնում են այդ աղբյուրների գիտական նշանակությունը: Ի դեպ, նույնպիսի խոշոր գիտական նշանակություն ունի նաև Հանվելի աշխատությունը, որում ժամանակաշրջանի իրանյան առևտրի վերաբերյալ¹⁰¹, Ալո գրքում բաղմաթիվ պատմական փաստեր կան, որոնք անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի պատմության հետ:

XVIII դարի 60—70-ական թթ. Թուրքիայի պատմության ուսումնասիրության համար որոշ արժեք են ներկայացնում նաև Ֆրանսուա դե Տոտի¹⁰², բարոն դե Բոննեվալի¹⁰³ հուշերը, Մարսիլի¹⁰⁴ Թուրքիայի ռազմական պատմությանը նվիրված հանրահայտ աշխատությունները և այլն:

Հունգարական ծագում ունեցող բարոն դե Տոտը երկար տարիներ աշխատում էր Պոլսի ֆրանսիական դեսպանի մոտ: Նա մի քանի տարի ծառայեց նաև թուրքական բանակում, որպես ռազմական ինժեներ: Առանձնապես մեծ գործունեություն ծավալեց 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ: Մշտական շփման մեջ գտնվելով թուրքական ղեկավար շրջանների հետ, նա մոտիկից ծանոթացավ թուրքական վարչական համակարգի, ֆինանսական դրության, բանակի կացության հետ և այլն:

Վերը հիշատակված այս երեք հեղինակների մոտ էլ այս կամ այն առիթով խոսվում է Թուրքիայի հայերի, նրանց իրավական վիճակի մասին և այլն:

Այս ժամանակաշրջանի պատմության համար մասնագետների մոտ ամենայն ճանաչում ունի ծագումով պոլսահայ Իգնատիոս Մուրադեա դ'Օսսոնի յոթհատորանոց «Օսմանյան կայսրության ընդհանուր պատկերը»¹⁰⁵ խորագիրը կրող աշխատությունը: Նա ղբաղվել է դիվանագիտական գործունեությամբ: (Եղել է Շվեդիայի դեսպանության աշխատակիցը Պոլսում. հուպատոս Իդմիրում): Մ. դ'Օսսոնի աշխատությունը կատարյալ մի հանրագիտարան է Օսմանյան կայսրության ու նրա հաստատկների կյանքի տարբեր կողմերի մասին: Հիմնականում լինելով պատմական հետազոտություն, միաժամանակ Մ. դ'Օսսոնի աշխատությունը հեղինակի Լրկա տարիների ընթացքում կատարած անձնական դիտողությունների արդյունք է: Աշխատության մի մասը թարգմանված է ռուսերեն¹⁰⁶:

XVIII դարի վերջին քառորդին Արևելքի պատմության և կարևորագույն եվրոպական աղբյուրների շարքին են դասվում նաև ֆրանսիացի ճանապարհորդներ ու դիվանագիտական ներկայացուցիչներ կոմս դե Ֆերրիեր-Սովբեֆի¹⁰⁷, Ֆ. Վոլնեյի¹⁰⁸ և Գ. Ա. Օլիվիեի¹⁰⁹ ուղեգրությունները:

Ֆերրիեր-Սովբեֆ (1750—1814) 1782—1789 թթ. ֆրանսիական թագավոր Լեոպոլդիկոս XVI-ի հանձնարարությամբ դիվանագիտական գործունեության է ուղարկվում Պոլիս, և այստեղից երկու անգամ՝ 1784—1785 և 1787 թթ. մեկնում է Իրան՝ Սպահան՝ ճանապարհահան Նա

¹⁰¹ Hanvey. An historical account of the British Trade over the Caspian sea. T. —IV, London, 1753.

¹⁰² Tott, baron de. Mémoires sur les Turcs et les Tartares. Vol. I—III, Amsterdam, 1784.

¹⁰³ Mémoires de comte de Bonneval... sous les empereurs Ahmet III et Mahomet I. Nouvelle édition, vol. II, Paris, 1806.

¹⁰⁴ L'état militaire de l'empire ottoman, ses progrès et sa décadence par M. le comte de Marsigli. Amsterdam, 1732.

¹⁰⁵ M. d'Ohsson. Tableau général de l'empire ottoman. Vol. I—VII, Paris, 1778—1824.

¹⁰⁶ М. д'Оссон. Полная картина Османской империи в двух частях, перевод с французского. Спб., 1795.

¹⁰⁷ Mémoires historiques, politiques et géographiques des voyages de comte de Ferrières-Sauveboeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789. T. I—II, Paris, 1790.

¹⁰⁸ C. F. Volney. Voyage en Egypte et en Syrie pendant les années, 1783, 1784 et 1785 suivi de considération sur la guerre des Russes. London, 1788.

¹⁰⁹ Voyage dans l'empire ottoman, l'Egypte et la Perse, fait par ordre d'un gouvernement pendant les six premières années de la république, par G. A. Olivier. Paris an 9(1801).

այցելում է պատմական Հայաստանի քաղաքները՝ էրզրում, Կարս, Բայազետ, Երևան, Էջմիածին, Նախիջևան, լինում է Անգրիովկասի հայաշատ քաղաքներում, որոնց թվում՝ Քսիլիսիում ու Շամախիում և այլն: Գտնվելով Իրանում, Ֆերրիեր-Սուվրեֆը իրանական կառավարությանը հորհուրդ էր տալիս հնարավորության սահմաններում թույլ շտալ Ռուսաստանի թափանցումը Անգրիովկաս: Ի դեպ, հեղինակը տեղեկություններ է հաղորդում նաև Իրանի քաղաքական պատմության հարցերի շուրջ Նադիր շահի մահից հետո: Արժեքավոր են այս առումով այն էջերը, որոնք նվիրված են հեղինակի մասնավոր շահերին՝ Ալի Մուրադ խանին և Աղա Մուհամմեդ խանին¹¹⁰: Ուղեգրության մեջ մեծ տեղ է հատկացված ռուս-թուրքական 1787—1791 թթ. պատերազմի զլխավոր պատճառներին, պատերազմող կողմերի ռազմական հնարավորություններին և այլն:

Ֆրանսուա Վոյնելի ուղեգրության մեջ հիմնականում խոսվում է թուրքական տիրապետության ներքո գտնվող Սիրիայի և Նեղիպոսի մասին, սակայն այստեղ արժարժվում են Օսմանյան կայսրության հասարակական-տնտեսական պատմության այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են հպատակ բոլոր ժողովուրդներին: Այստեղ բազմաթիվ փաստերի հիման վրա ցույց է տրված օսմանյան իրավակարգի գրգռող բնույթը:

Գ. Ա. Օլիվիեի ուղեգրությունը ուսանելի է շատ կողմերով: Ուշադրություն է գրավում հեղինակի քաջատեղյակությունը Թուրքիայի և Իրանի ներքին վիճակին XVIII դարի 80-ական թթ.: Բն. Թուրքիայի հողային հարաբերությունների և թե՛ նահանգներում փաշաների գործադրած բռնությունների ու կամալականությունների մասին խոսելիս անմիջապես երևում են հեղինակի խոր գիտելիքները: Հեղինակը գրչի տակից ընթերցողների առաջ հանում է արևելյան բռնատիրությունների բայթալման պրոցեսի և հպատակ ժողովուրդների, մասնավորապես բրիտանյանների, անտանելի վիճակի վառ գույներով նկարագրված տխուր պատկերը:

Հայաստանի պատմական աշխարհագրության տեսակետից որոշ հետաքրքրություն է ներկայացնում 1797 թ. Փարիզում լույս տեսած «Պատմական և աշխարհագրական հիշատակություններ Սև ու Կասպից ծովերի արանքում ընկած երկրների» մասին վերնագրով աշխատությունը¹¹¹:

ЕВРОПЕЙСКИЕ АВТОРЫ ОБ АРМЕНИИ И АРМЯНАХ (XVI—XVIII вв.)

Источниковедческий обзор

Доктор ист. наук М. К. ЗУЛАЛЯН

Резюме

Как и в предыдущей статье (№ 2 журнала за этот год), рассматриваемые здесь авторы—главным образом путешественники, в трудах которых имеются интересные, а порою уникальные сведения об Армении указанного периода. Кроме этих авторов, значительное внимание уделено также тем, которые оставили исторические сочинения по истории Турции и Ирана, где имеется немало сведений об Армении и армянах. Для изучения истории Армении этого периода определенный научный интерес представляют также донесения европейских дипломатов, содержащие данные по политической и социально-экономической истории Армении. В статье приведена также европейская литература, в которой затрагивается деятельность католических миссионеров в Армении в XVI—XVIII вв.

¹¹⁰ Ferrière-Sauveboeuf, t. II, p. 1—20.

¹¹¹ Mémoires historiques et géographiques sur les pays entre la mer Noire et la mer Caspienne. Paris, 1797.